ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Texnology LGP-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-25 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	-	-	-	-	Կապտասև Dark Navy Blue, անջրանցիկ 100% պոլիէսթեր կտորից, տեսակարար կշիռը՝ 140 գ/մ2, ±3%: Մատակարարի կողմից ներկայացվում է կտորի գույնի և բաղադրության հավաստիության վերաբերյալ փաստաթուղթ, որը տրվում է կտորը արտադրողի կողմից: Կտորի ներսի կողմից մեմբրանե ծածկույթով, օձիքը կանգուն, հանովի ներդիրով: Օձիքը երկակի է, ներսում շղթայի տակ նախատեսված է գլխարկ: Գլխարկը ունի կարգավորիչ, կպչուն ժապավեն: Օձիքի մեջտեղում

					ներկարված է կախիչ: Առաջամասը բաղկացած է 4 մասից, 2-րդ մասի ձախ կողմում կարվում է 38մմ երկարությամբ օղակ՝ տեսախցիկի համար և կրծքանշանի ներդիր, իսկ աջ կողմի 2-րդ մասում կարվում է 35մմ երկարությամբ օղակ՝ ռադիոկայանի խոսափողի համար: 3-րդ մասի աջ և ձախ կողմերում հորիզոնական գրպաններ՝ ներկարված ամբողջական կափույրով և YKK որոկի պլաստմասե շղթայով փակվող, ինչպես նաև աջ և ձախ կողմերի կենտրոնական մասում ուղղահայաց գրպաններ՝ ներկարված ամբողջական կափույրով, 4-րդ մասի աջ և ձախ կողմերում թեք գրպաններ՝ ներկարված ամբողջական կափույրով և YKK որոկի պլաստմասե շղթայով փակվող: Դիմացից ամբողջական կափույրով ներկարված YKK որոկի պլաստմասե շղթայով և կոճգամներով: Կողային և կրծքային գրպանները՝ կայծակաճարմանդով: Կիսավերարկուն կողքերից ներքևի մասում անջատվում է շղթայով, որի վրա կան կարգավորիչներ: Թևքերի

						ծայրերին ներկարված են էլաստիկ ժապավեններ՝ կարգավորող կպչունակով: Գոտին կարված է կիսավերարկուին, որի մեջ մշակված է էլաստիկ ժապավեն: Կիսավերարկուն ներսից՝ ներդիրի ձախ կրծքամասի հատվածում ունի ուղղահայաց գրպան: Ընդարձակ կտրվածք՝ շարժունակությունն ապահովելու համար: Ներդիրը կապտասև գույնի ֆլիս կտորից, ամբողջությամբ առանձնանում է YKK որոկի պլաստմասե շղթայով, որի վրա կարված է վիսկոզից աստառ: Ներդիրի թևքերը ներսից նույնպես առանձնանում են YKK որոկի պլաստմասե շղթայով: Թիկունքի վերևի մասում կարվում է սպիտակ գույնով ջակարդով ասեղնագործված 28X7,5սմ «POLICE», իսկ աջ կրծքամասում 13X2,5սմ կարվում է «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» մակագրությամբ բառերը: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության թևքանշան՝ ջակարդով ասեղնագործած:

					Ուսադիրները կարվում են նույն կտորից, բաճկոնի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ: Ուսադիրները օձիքի մասում կոճկվում են մուգ կապույտ պլաստմասե կոճգամով, իսկ ուսերի մասում կարված են: Կիսավերարկուն պիտակավորված, որի վրա պետք է նշված լինի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը և լվանալու պայմանները: Չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Փաթեթավորումը՝ տեսականին 3 հատ՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Պարտադիր, մատակարարի հաշվին կատարվում է լաբորատոր ստուգում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Texnology LGP в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-25 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					